

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2011 թվականի N 558-Ն

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հանքավայրի շահագործման հանքային իրավունքով ծանրաբեռնված և փաստացի շահագործման փուլում գտնվող՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի (բացառությամբ անտառային հողերի) նպատակային նշանակությունը սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից համարվում է փոփոխված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի՝ լեռնահատկացման ակտով սահմանված չափով ու սահմաններով, ինչն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

2. Անտառային հողերի նպատակային նշանակության փոփոխման համար հողամասի սեփականատիրոջ դիմումի հիման վրա, որին կցվում է լեռնահատկացման ակտի ընթեռնելի պատճենը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը եռօրյա ժամկետում կազմում է հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ՝ լեռնահատկացման ակտով սահմանված չափով ու սահմաններով և, որպես շահագրգիռ կողմ, ներկայացնում է համապատասխան համայնք ու Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով սահմանված կարգով՝ հնգօրյա ժամկետում՝ համաձայնեցման: Եթե համապատասխան համայնքը հնգօրյա ժամկետում կարծիք չի տալիս նախագծի վերաբերյալ, ապա հողամասի նպատակային նշանակության փոփոխումը համարվում է համաձայնեցված:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը կարծիքներն ստանալուց հետո եռօրյա ժամկետում ամփոփում է ստացված կարծիքներն ու առաջարկությունները, անհրաժեշտության դեպքում հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծում կատարում է համապատասխան փոփոխություններ և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Տ. Սարգսյան

2011 թ. մայիսի 11
Երևան